



«ԵՆ ԶԿՆԻ ԻՄ...»

Ապրիլի 28-ին՝ Երևանի Սուրբ Խաչի փոնին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռնադրվեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Ս. Նավասարդ եպս. Կոնյանի, մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ, որի ընթացքում փեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն:

Հիշարժան այդ օրը հաղթական բերկրալից էր Գևորգյան Հոգևոր ճեմարանի շրջանավարտներ Հովհաննես սրկ. Անտոնյանի, Տիգրան սրկ. Նիկողոսյանի, Նելսոն սրկ. Բաբայանի, Հրանտ սրկ. Կոստանյանի և Էդգար սրկ. Սողոմոնյանի համար, որոնք հրեթացս Սուրբ և անմահ Պատարագի արժանացան քահանայական ձեռնադրության և օծման՝ կոչվելով «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն»:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, փեղի ունեցավ կոչման կարգ: «Նայեա եւ լուր» շարականի երգասացության ներքո սարկավագները երեք հանգրվաններով մոտեցան Սրբություն Սրբոց Իջման Սուրբ Մեղանի առջև գահին բազմած Սրբազան Հորը, և Հայոց Հայրապետի, հոգևորականաց դասի, ճեմարանականների ու հավատարմոր ժողովրդի ներկայությամբ կարարվեց ընծայման ու հավատո քննության հանդիսավոր կարգը: Որպես հավաստումն Հայ Եկեղեցու հանդեպ իրենց հավատարմության՝ ընծայալներն ընթերցեցին Ս. Գրիգոր Տաթևացու «Հաւատոյ խոստովանութիւնը»՝ ուխտելով հեղինակ Տիրոջ ճշմարիտ պատգամներին և հնազանդ մնալ Մայր Եկեղեցու կանոններին:

Նորընծաների հոգևոր հասունության, բարեսպաշարության, մարավոր պատրաստվածության և մարդկային բարձր հատկանիշների մասին վկայեց խարտավիլակը՝ Հոգեշնորհ Ս. Արարկ վարդապետ Տիգրանյանը: Այնուհետև ընծայացուները «Այսօր աստուածութիւնն զուարճանայ» շարականի երգեցողությամբ գլխահակ մոտենում են Ավագ Խորանի աստիճաններին և ծնրադիր բարձրանում Սուրբ Խորան: Շրջվելով դեպի արևմուտք՝ «Աստուածային և երկնային շնորհ» շարականի հնչյունների ներքո նրանք բարձրացնում են ձեռքերը՝ հրաժարվելով աշխարհիկ կյանքից և հավատարմագրվում հոգևոր կյանքին: Այս խոնարհաբար մոտենում են ձեռնադրող Սրբազանին, որը, ընթերցելով ձեռնադրության Մաշտոցի համապատասխան հարվածը, նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով սարկավագությունից կոչում է քահանայության՝ ասելով. «Ես դենմ գձեռս ի վերայ



«Ի ՍԱՐԿԱՆԱԳԱԹԻՆԵ Ի ՉԷԼԱՆԱՅՈՒԹԻՒՆ»

ՀԱՅԿԱՆԱԳԱԹԻՆԵ Ի ՉԷԼԱՆԱՅՈՒԹԻՒՆ

1908 թ. Դեկտեմբեր

ՄԻՍԿԱՆՈՒՄԻՆԻՍՏ ԵՊԻՏՈՓՈՍԱՆՈՒ ՂԵԿԱՆ ՍԵՂԷ ԵՎ ՎԻՍՏԵՓՈՍԻԱՆԻՆԻՍՏԷ



սոցա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժան լիցի սա զաստիճան քահանայութեան անարար պահել սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Այնուհետք Սրբազան Հայրը Քրիստոսի լծի խորհրդանիշ սարկավագական ուրարը բոլորադիր գերեզելով վերածում է քահանայական փորձութարի: Քահանայական զգեստավորումը համալրում են քահանայական թագը, գոգիւն, շուրջառը, որոնք խորհրդանշում են հոգևոր իշխանությունը:

Այնուհետք՝ «Օծում, գոր հեղեր...» շարականի հնչյունների ներքո Սրբազան Հայրը Սրբալույս Մյուռնոնով օծում է ընծայականների ճակարն ու ձեռքերը և դրոշմի հետ նրանց տալիս նոր անուններ՝ Հովհաննես սրկ. Անտոնյանին՝ Ս. Զգոն, Տիգրան սրկ. Եղիազարյանին՝ Ս. Ռուբեն, Նելսոն սրկ. Բաբայանին՝ Ս. Մուշեղ, Հրանտ սրկ. Կոստանյանին՝ Ս. Զոհրապ, և Էդգար սրկ. Սողոմոնյանին՝ Ս. Գնել: Սրբազան Հայրն օծյալներին փոխանցում է սկիզբ, որը խորհրդանշում է պատարագելու և Տիրոջ փրկարար մարմինն ու արյունը բաշխելու իրավունքը:

Սրբազան արարողության ընթացքում Ս. Նավասարդ եպս. Կոնյանը, ձեռնադրվողներին դիմելով՝ «Ա՛յն զիսպն եւ եկ զկնի իմ...»,- Տիրավանդ պատգամով, այնուհետք շարունակելով խոսքն ասում է. «Սրբազնաստուրք աստվածահիմն այս վայրում՝ Միածնաւէ Տաճարի խնկարայր կանարների ներքո, այս պահին հնչում է Տիրոջ խորհրդավոր ձայնը, որ Իր անախ սիրտ թագավորությունից կանչում է մեզ՝ «Եկ զկնի իմ...»: Եվ մենք, որպէս Քրիստոսի հավատքի ժառանգորդներ, խաչը մեր սրտերում՝ քայլում ենք Տիրոջ երկնից: Քայլում ենք խաչահակ, քանզի հավատում ենք, որ Քրիստոսի հարուցրալ խաչը սիրտ և լույսի հաղթարշավի ճանապարհն է:

Այսօր տոն է Երևանի Սուրբ Խաչի: 351 թվականին, Աստուծո գործությամբ մեր պաշտոն խաչը, ի ցոյց անհավատ մոլորյալների, խաչանման լույսի ճառագմամբ փայլեց Երուսաղեմի վրա՝ Գողգոթայից մինչև Չիթենյաց լեռ: Այդ պահին քրիստոնեական խաչի երթին զինվորագրվեցին բոլորալոր հավատացյալներ:

Ի նշանավորումն Խաչի տոնի, խաչի հաղթական այդ երթի՝ Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Անհախառ Հայրապետի բարձր տնօրինությամբ Գեորգյան Հոգևոր Ընկարանի ուսյալ, բարեպաշտ և ծառայաւեր այս երիտասարդները ստացան քահանայական ձեռնադրություն և օծում: Այս սրբազան արարողությամբ, սիրելի՛ նորածներ, «Աստուծո զգեցուցե՛ ձեզ զնոր մարդն, որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ եւ ճշմարտութեամբ»: Դուք հրաժարվեցիք աշխարհական կյանքից և գիտակցական բարձր ընծայաբերումով, հոգեմտալոր սուրբ երդումով դարձաք աստվածագլխաց զինվորագրյալները Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու: Այսօր դուք, սարկավագական ուրարը փոխարինելով քահանայական փորձութարով, դարձաք Աստուծո Բանի մարակարարն ու բաշխիչը, մոնեպիկները աստվածային լույսի, դեսպանն Աստուծո:

Մենք բոլորս այս պահին ցնծում ենք, որովհետև նորոգվում է Մայր Աթոռը, երկրասարդանում: Մենք ունենք խոկուն ու կորույի հայրապետ, երկրասարդ հոգևորականություն: Այդ կենսաստորոգ ուժով, մեծ իրագործումներով Մայր Աթոռն այսօր նոր ավիշ, նոր ոգի է հաղորդում համայն հավաքացիոց հայոց:

Այս երկրասարդները ոգեկոչումն են նաև մեր եղեռնագարի հոգևորականության: Դուք, սիրելի նորածներ, նրանց կիսար գործի շարունակողներն եք, հայոց րոհմածադի բեկված ճյուղերի նոր ընձյուղները: Այս սրբազան արարողությանը հարություն առան նրանք, ինչպես հարություն առավ հավիտենական Բահանայապետը, անգերեզմանելի հույսը քրիստոնյա աշխարհի: Դիտու Քրիստոս ինքնապարարագմամբ կարարեց քահանայական իր պաշտոնը: «Նաչը Քրիստոսի օծյալ գահն է», և դուք, որպես Քրիստոսի գահի ժառանգներ, քահանայության երկնավոր գործը ինքնագոհությամբ, ինքնապրմամբ ու սրբությամբ պիտի սրանանք:

Այսօր դուք ծնվում եք վերստին, նոր առաքելությամբ եք ելնում Երկնային Տիրոջն ընդառաջ, և ձեր ժառայասիրությամբ պիտի շենասա մեր Եկեղեցին, մեր հայրենիքը: Թող խոնարհությունը լինի ձեր վեհությունը, որպեսզի աստվածահաճ լինի ձեր վարքը, և ճշմարտաշունչ՝ ձեր քարոզը: «Հավարա՛, ինչ որ կարդում ես, քարոզի՛ր, ինչին որ հավարում ես, կարարի՛ր, ինչ քարոզում ես», - ահա պարզամբ ժողովրդյան ձեզ ուղղյալ:

Աղոթքով շաղախեք ձեր նոր կյանքը, որպեսզի այն պայծառացնեք որպես շափուղա, որ կա Աստծո մեջ, - ինչպես ասում է Սուրբն Եվագրը. «Եթե շնորհին Աստծոյ մերկանամք զհին մարդն, ի ժամ աղօթիցն պայծառանամք իբրեւ զշափաղայն, որ կայր ի ներքոյ Աստծոյ»:

Որպես Ավետարանի նորաշունչ քարոզիչներ՝ Սուրբ Մյուռոնի միջոցով ներթափանցված Աստծո գործությամբ նոր հազարամյակը պիտի դարձնեք հայ Եկեղեցու վերակերպման շրջան:

Աղոթք եմ առաքում առ Բարձրյալն Աստված՝ հայցելով Տիրոջը, որ Իր ամենագոր Աջը տարածի մեր նորընծաների վրա, զորեղացնի նրանց, որպեսզի կարողանան գրավել մարդկային սրտերը և առաջնորդեն նրանց դեպի Կենսասիրտ Լույսը, դեպի Դիտու Քրիստոս:

«Շնորհք, սեր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեանդ ամէն»:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից ետք, Սրբազան Հոր հանդիսապետությամբ կարարվում է «Օրհնություն արեղայի» կամ «Օրհնություն վեղարի» կարգը, որով վեղար են սրանում Ս. Մուշեղ, Ս. Զոհրապ, Ս. Գնել արեղաները: Երևման Սուրբ հացի օրն իր հոգևոր լրումին է հասնում Վեհարանում, որտեղ նորընծաներին հայրաբար շնորհավորում և իր օրհնություններն է բաշխում հայոց հայրապետը:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՂՅԱՆ